ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 64/2

24-ը դեկտեմբերի 2022 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2022թ. դեկտեմբերի 24-ի նիստի թիվ 64/2 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

ԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ «ՏԱՐՎԱ ՈՒՍԱՆՈՂ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի (այսուհետև՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգը:

1.2. Սույն կարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունների, «Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կանոնակարգի, ԵՊՀ ԻՄ-ի 2022-2026 զարգացման ռազմավարական ծրագրի, Կրթության բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության հիման վրա:

1.3. Մրցույթի նպատակն է խրախուսել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող ուսանողների առաջադիմությունը և խթանել նրանց գիտական և հասարակական

ակտիվությունը։

1.4. Մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի բոլոր այն ուսանողները, ովքեր սովորել են առնվազն 4 կիսամյակ և ԵՊՀ ԻՄ-ի մագիստրատուրայի բոլոր այն ուսանողները, ովքեր սովորել են առնվազն 2 կիսամյակ։

1.5. Մրցանակաբաշխությունը կազմակերպվում և անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ անգամ՝ երկրորդ կիսամյակում։

2. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունը կազմակերպելու և անցկացնելու համար ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առաջին տասնօրյակում ստեղծվում է մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)։

2.2. Հանձնաժողովի հիմնական կազմը բաղկացած է հետևյալ անդամներից՝ ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրեն (հանձնաժողովի նախագահ), Գիտական քարտուղար, Ուսումնամեթոդական վարչության պետ, Իրավախորհրդատու, Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ, ԵՊՀ ԻՄ մանդատային հանձնաժողովի քարտուղար (հանձնաժողովի քարտուղար), Ուսանողական խորհրդի ներկայացուցիչ, Ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչ։ Հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր ֆակուլտետի դեպքում ընդգրկվում են տվյալ ֆակուլտետի դեկանը և ներկայացուցիչներ ուսանողական ՈՒԽ-ից և ՈՒԳ-ից։

2.3. Հանձնաժողովը սահմանում է իր գործունեության աշխատակարգը։

2.4. Թեկնածուների առաջադրման, հաղթողների ընտրության, մրցույթի անցկացման (մրցանակների հանձնման հանդիսավոր արարողության) և այլ աշխատանքների կազմակերպման համար Հանձնաժողովը հրավիրում է նիստեր և աշխատանքային խորհրդակցություններ։

2.5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների 2/3-ով:

2.6. Մրցույթի հաղթողների վերաբերյալ Հանձնաժողովի որոշումները մինչև մրցույթի արդյունքների ներկայացման օրը հրապարակման ենթակա չեն:

3. ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1. Մրցույթին կարող են մասնակցել սույն կարգի 1.4 կետին բավարարող բոլոր այն ուսանողները, ովքեր վերջին երկու կիսամյակների ընթացքում ունեցել են բարձր առաջադիմություն (ՄՈԳ-ը 16 և բարձր), ինչպես նաև ունեն սույն Կարգի 3.5 կետում նշված ձեռքբերումները:

3.2. Մրցույթի անցկացման օրվանից առնվազն 30 օր առաջ Հանձնաժողովը հայտարարում է մրցույթի անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման գործընթացը սկսելու մասին:

3.3. Մրցույթին մասնակցելու թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ թղթային կամ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (հայտի ձևը տես հավելված 1-ում): Հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանում է Հանձնաժողովը՝ մրցույթի անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

3.4. Մրցույթին մասնակից թեկնածուները հայտերը և Կարգով պահանջվող կից փաստաթղթերը ներկայացնում են ԵՊՀ ԻՄ-ի ԱԿԻԱ բաժին: Էլեկտրոնային (առցանց) հայտերի ներկայացման մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից մրցույթի անցկացման պայմանների հայտարարության ժամանակ:

3.5. Մրցույթի մրցանակակիրներին որոշելու համար դիտարկվում են ուսանողի հետևյալ ձեռքբերումները.

ա/ առաջադիմություն,

բ/ ներգրավվածություն գիտական աշխատանքներում,

գ/ մասնակցություն ներհամալսարանական արտալսարանային կյանքին,

դ/ արտահամալսարանական ակտիվություն՝ մշակույթի, սպորտի, արվեստի և այլ ոլորտներում հաջողություններ։

3.6. Մրցույթի մասնակիցը 3.5 կետում նշված ձեռքբերումները հավաստելու համար հայտին կից ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

ա/ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների կողմից տրված բնութագրեր (մասնագիտական ամբիոնից երկու բնութագիր),

բ/ ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության կողմից տրված բնութագրերը,

գ/ տպագրված գիտական աշխատանքների պատճենները կամ դրանք հավաստող այլ փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),

դ/ ներհամալսարանական ակտիվությունը հավաստող փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),

ե/ արտահամալսարանական ակտիվությունը հավաստող փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),

զ/ այլ փաստաթղթեր և նյութեր, որոնք լավագույնս կներկայացնեն մրցույթին մասնակից ուսանողի ձեռքբերումները։

3.7. Ներկայացված բնութագրերը և այլ փաստաթղթերը պետք է հստակ և հնարավորինս մանրամասն ներկայացնեն ուսանողի՝ սույն կարգի 3.5. կետում նշված ձեռքբերումները։

3.8. Թեկնածուի առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողովին տրամադրում են ԵՊՀ ԻՄ-ի համապատասխան ստորաբաժանումները։

3.9. Մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, ԵՊՀ ԻՄ-ի կայքէջում հրապարակվում է հայտ ներկայացրած ուսանողների ցանկը։

4. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1. Մրցույթի մրցանակակրի ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով, երկու փուլով՝ ներկայացված հայտերի գնահատում և հարցազրույց, որոնց արդյունքում ձևավորվում է մրցույթին մասնակից ուսանողի ընդհանուր միավորը։

4.2. Առաջին փուլում Հանձնաժողովը (հիմնական կազմով) դիտարկում է հայտ ներկայացրած ուսանողների՝ թեկնածուների համապատասխանությունը մրցույթի ֆորմալ պահանջներին և ըստ սույն Կարգի սահմանած չափանիշների՝ կատարում հայտերի բալային գնահատում։

4.3. Հայտի և կից ներկայացված փաստաթղթերի բալային գնահատման ժամանակ Հանձնաժողովն առաջնորդվում է սույն կարգի 4.4, 4.5, 4.6, 4.7 և 4.8 կետերում նշված չափանիշներով:

4.4. Բակալավրիատի ուսանող-թեկնածուի ձեռքբերումներում առաջադիմության համար տրվող միավորը հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝ 10 + (ՄՈԳ-16) * 2.5, մագիստրատուրայի ուսանող-թեկնածուների դեպքում՝ բակալավրիատի ՄՈԳ-ի և ընթացիկ ՄՈԳ-ի միջին թվաբանականը

4.5. Ուսանող-թեկնածուի ձեռքբերումներում՝ գիտական աշխատանքներում ներգրավվածության գնահատականը ձևավորվում է 4.5.1, 4.5.2, 4.5.3, 4.5.4 և 4.5.5. կետերով թեկնածուին հասանելի միավորների հանրագումարով։ Վերը նշված կետերով սահմանված չափանիշների համաձայն՝ մրցույթի հաղթողը պետք է ապահովի գիտական աշխատանքների ներգրավվածության նվազագույն շեմը՝ 2 միավոր։

4.5.1. Զեկուցմամբ մասնակցություն գիտաժողովներին, սեմինարներին, կոնֆերանսներին, համաժողովներին և գիտական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումներին. մեկ զեկուցման համար՝ 1 միավոր, երկու և ավելի զեկուցումների համար 2 միավոր։

4.5.2. Տպագրված թեզիսներ. մեկ տպագրված թեզիսի համար տրվում է 1 միավոր, երկու և ավելի թեզիսների համար՝ 2 միավոր։

4.5.3. Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ-ի) պահանջներին համապատասխան մեկ տպագրված հոդվածի համար տրվում է 4 միավոր, երկու և ավելի հոդվածների համար՝ 7 միավոր։ Գիտակրթական ոլորտում այլ ձեռքբերումները (պատենտ, հեղինակային իրավունքի արտոնագիր) հավասարեցվում են ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան տպագրված հոդվածներին։

4.5.4. Արտերկրի հեղինակավոր (տես «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» աղուսյակ 1-ի 1-4 կետերում նշված գիտահետազոտական գործունեության (աշխատանքի) նկարագրերը) ամսագրերում մեկ տպագրված հոդվածի համար տրվում է 6 միավոր, երկու և ավելի հոդվածների համար՝ 11 միավոր։

4.5.5. Հեղինակավոր մրցանակի կամ միջազգային օլիմպիադայի դիպլոմի առկայության դեպքում տրվում է 3 միավոր (յուրաքանչյուրի համար), սակայն առավելագույնը 6 միավոր։

4.6. Թեկնածուների ներհամալսարանական կյանքին մասնակցության գնահատականը ձևավորվում է ստորև նշված 4.6.1, 4.6.2, 4.6.3 և 4.6.4 կետերով թեկնածուին հասանելի միավորների հանրագումարով։ Մրցույթի հաղթողը պետք է ապահովի ներհամալսարանական հասարակական աշխատանքների ներգրավվածության նվազագույն շեմը՝ 5 միավոր։

4.6.1. Ֆակուլտետի ուսանողական հասարակական (արտալսարանային) տարբեր միջոցառումներում ակտիվ մասնակցության և ներգրավվածության համար բացառությամբ այն միջոցառումների, որոնք դիտարկվել են 4.5.1. կետում) թեկնածուին տրվում է 2-ից 4 միավոր։

4.6.2. Ֆակուլտետի ուսանողական հասարակական(արտալսարանային) տարբեր միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին

մասնակցության համար թեկնածուին տրվում է 3-ից 6 միավոր։

4.6.3. Ֆակուլտետի ՈՒԽ կամ ՈՒԳԸ անդամներին, ՈՒԽ համագումարի պատվիրակներին, ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին տրվում է 3 միավոր։

4.6.4. Համահամալսարանական ուսանողական հասարակական աշխատանքներում ակտիվ ներգրավվածության համար տրվում է 5-ից 8 միավոր։ ԵՊՀ ԻՄ ուսանողական կազմակերպությունների կենտրոնական մարմիններում ընտրված ուսանողներին տրվում է 2 միավոր։

4.6.5. Մշակույթի, սպորտի, արվեստի և այլ ոլորտներում նշանակալի հաջողությունների համար Հանձնաժողովի որոշմամբ կարող է տրվել մինչև 7 միավոր, իսկ բացառիկ դեպքերում՝ 10 միավոր։

4.7. Առաջին փուլի արդյունքում Հանձնաժողովը յուրաքնաչյուր ֆակուլտետից ընտրում է մրցույթի մրցանակակրի առավելագույնը երեք հավակնորդ։ Հավակնորդների անունները հրապարակվում են ԵՊՀ ԻՄ կայքէջում մրցույթի անցկացման օրվանից (մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունից) առնվազն երեք օր առաջ։ Բոլոր հավակնորդները հրավիրվում են մասնակցելու մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությանը։

4.8. Մրցույթի հաղթողի (կամ մրցանակակրի) ընտրության փուլում յուրաքանչյուր ֆակուլտետից ընտրված հավակնորդներին Հանձնաժողովը՝ լրացված կազմով (հիմնական կազմ և տվյալ ֆակուլտետի դեկան և ՈՒԽ նախագահ) հրավիրում է հարցազրույցի։ Հարցազրույցի ժամանակ դիտարկվում են հայտում ներառված հարցերին հավակնորդի տված պատասխանները։ Հարցազրույցի արդյունքում Հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հավակնորդին տրվում է 0-5 միավոր։ Հավակնորդներից հաղթող համարվում է առավելագույն միավոր հավաքածը։ Հաղթողի անունը հրապարակվում է մրցանակների հանձնման հանդիսավոր արարողության ընթացքում։

4.9. Մրցույթի մրցանակակիրների պարգևատրման համար Հանձնաժողովը

կազմակերպում է մրցանակների հանձնման հանդիսավոր արարողություն։

4.9.1 Մրցույթի առաջին փուլն անցած և մրցույթի հաղթող չճանաչված հավակնորդները պարգևատրվում են «ԵՊՀ ԻՄ-ի տարվա ուսանող» ամենամյա մրցույթին առաջադրվելու և հիմնական հավակնորդ ճանաչվելու պատվոգրով։ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենությունն ու ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը կարող են սահմանել նաև հավակնորդների խրախուսման այլ միջոցներ։

4.9.2.Մրցույթի հաղթողը պարգևատրվում է «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տարվա ուսանող» ամենամյա մրցույթին հաղթելու պատվոգրով և մրցույթի համար տնօրենության կողմից սահմանված մեդալով։ ԵՊՀ ԻՄ տնօրենությունն ու ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը կարող են սահմանել նաև մրցույթի հաղթողի խրախուսման այլ միջոցներ։

4.10. Մրցույթի հաղթող ճանաչված ուսանողը հաջորդ տարի իրավունք չունի մասնակցելու մրցույթին։

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Հանձնաժողովի ընդունած որոշումները մրցույթի հավակնորդները կարող են բողոքարկել ԵՊՀ ԻՄ տնօրենին, «Տարվա ուսանող» մրցույթի արդյունքների հրապարակման օրվանից հետո՝ մեկօրյա (աշխատանքային օր) ժամկետում։ Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կամ «Տարվա ուսանող» մրցույթի կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ օրենսդրության կամ ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերի, այդ թվում՝ սույն Կարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի հիմնավորված որոշմամբ կատարվում է մրցույթի արդյունքների վերանայում։

6. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ և ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6.1. Սույն կարգը հաստատում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը:

6.2. Կարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ.

6.2.1. տնօրենի,

6.2.2. գիտական խորհրդի անդամների,

6.2.3.գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի առաջարկությամբ:

Հավելված 1.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հ Ա Յ Տ

2022թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթի մասնակցության

Մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը _____

Ծննդյան ամսաթիվը _____

Ֆակուլտետ (կրթագիտական ստորաբաժանում) _____

Մասնագիտություն _____

Կրթական ծրագիր ☐ բակալավր ☐մագիստրոս կուրս _____

Կոնտակտային հեռախոսահամարը _____

Էլ. փոստ _____

Կցվող փաստաթղթերի ցանկը (նշել որոնք կցվում են հայտին)՝

☐ առաջադիմության թերթիկ

☐ հրապարակումների ցուցակ (հաստատված դեկանի և ֆակուլտետի գիտական քարտուղարի ստորագրությամբ)

☐ գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը հաստատող այլ փաստաթղթեր

☐ հասարակական ակտիվությունը հաստատող փաստաթղթեր (տեղեկանքներ, բնութագրեր)

☐ քաղվածք ֆակուլտետի գիտխորհրդի նիստի արձանագրությունից (մրցույթին առաջադրելու մասին)

☐ բնութագիր (բնութագրեր)

☐ ստեղծագործական մրցույթների, օլիմպիադաների մասնակցությունը հավաստող փաստաթղթեր)

☐ Այլ _____

Մասնակցի ստորագրությունը՝ _____ **ամսաթիվ** _____

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մինչև